ԱՅՕ!

ԿՈՆԴ. ԵՐԵԱՆԻ ՓԱԿԱԳԾԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ

Նպատակ

Նպաստել Երևան քաղաքի ամենահին՝ Կոնդ թաղամասի վերափոխմանը պատմամշակութային և տուրիստական կարեւորություն ներկայացնող վայրի:

Գործողություններ

- Հրավիրել տեղացի և միջազգային ճանաչում ունեցող ուրբան նկարիչների, որոնք նոր շունչ կհաղորդեն Կոնդի դալուկ փողոցներին:
- Նպաստել, որ Կոնդ պատմական թաղամասը դառնա Երևանի կենտրոնի եզակի վայրերից:
- Մոտիվացնել կառավարությանը ամենահին հայկական թաղամասի պահպանման համար ներդրումներ անել:

Ծրագրի նկարագրություն

Երևանը Հռոմից էլ հին քաղաք է, իսկ Կոնդը դրա ամենահին՝ գոյությունը պահպանել փորձող թաղամասը: Երևանի արևմտյան հատվածում գտնվող բլրի վրա տեղակայված Կոնդ թաղամասը հազար տարուց ավելի բնակեցված է: Եվ չնայած Երեւանը եղել է պարսկական, արաբական և ռուսական հետաքրքրությունների կռվադաշտ, Կոնդը կարողացել է պահպանել իր ինքնատիպ պատկերը:

Երևանի հայկական ինքնության նմուշ լինելով հանդերձ՝ Կոնդը տարիների ընթացքում զգալիորեն քայքայվել է: Փողոցների հնամյա սալաքարերը ասֆալտապատվել են, իսկ որոշ տների կամայական վերանորոգումները ոլորապտույտ միջնադարյան փողոցներին ավելի շատ հաղորդել են հետնախորշի տեսք՝ խաթարելով պահպանված միջնադարյան թաղամասի տեսքը:

Բնակիչները շատ հաճախ զրկված են անգամ նվազագույն սանիտարական պայմաններից: Խորհրդային տարիներին այդ ծառայությունները կանխամտածված կերպով բացակայում էին, քանի որ նախատեսվում էր թաղամասի ոչնչացումը: Բարեբախտաբար, ԽՍՀՄ-ի փլուզումն ու միջոցների անբավարարությունը խափանել են այդ ծրագրերը:

Kond Gallery-ն տեղացի արվեստի գործիչ **Սերգեյ Նավասարդյանի** նախաձեռնությունն է, ով իր գործունեությունը սկսել է իր տան պատերին նկարելով՝ այնուհետ անցնելով փողոցների պատերին: Սերգեյի ստեղծագործական անունը **Yerevantropics** է, նրա աշխատանքների մեջ հաճախ կարելի է հանդիպել Արարատ լեռը՝ արմավենիներով շրջապատված: Նա հավատում է, որ պատերի նկարազարդումները ավելին են, քան արվեստ, և որ դրանք հանդիսանում են քաղաքային միջավայրը փրկելու միջոց:

Մեր նպատակն է նպաստել Կոնդ պատմական թաղամասի վերակենդանացմանը՝ դարձնելով այն մշակութային կենտրոն: Մենք որոշել ենք աջակցել նախաձեռնությանը, որպեսզի վերադարձնենք Կոնդին իր իրական արժեքը: Այդ նպատակով կհամախմբենք միջազգային ճանաչում ունեցող երկու և տեղացի հինգ ուրբան նկարիչների, որոնք նոր շունչ կտան Կոնդի փողոցներին: Կոնդում արդեն իսկ արված նկարները մեծ հետաքրքրություն են առաջացրել բնակիչների շրջանում, և հիմա նրանք անհամբեր սպասում են նոր նկարազարդումների, որոնց յուրօրինակ ոճն ու լուծումները կգունավորեն իրենց թաղամասի բետոնե կոնստրուկցիաները:

Ծրագրի բարեհաջող իրականացումը թաղամասն ավելի հրապուրիչ կդարձնի: «Բացօթյա պատկերասրահ»-ի այցելուները կզմայլվեն պատմական շենքերով ու փողոցներով, կամ կցանկանան դրանց միջև գտնվող մի սրճարանում նստել-հանգստանալ: Ծրագիրը հիմք կդառնա ինքնաբուխ մի զարգացման՝ Կոնդը դարձնելով քաղաքի զարգացող կենտրոն:

Կոնդի վերակենդանացումը միգուցե նաև գրավի քաղաքային իշխանությունների ուշադրությունը և ոգեշնչի նրանց ներդրումներ կատարել թաղամասի զարգացման համար, վերակառուցել ենթակառուցվածքները և վերականգնել պատմական արժեքը՝ քանդելու և պատմությունը ջնջելու փոխարեն:

Միացի՛ր մեզ Կոնդը պատմամշակութային և տուրիստական կենտրոն դարձնելու կարեւոր գործում:

Բյուջե

ԻՆՉ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՀ ԴՐԱՄ
Ավիատոմս երկու արտասահմանյան արվեստագետի համար	֏790,000
Գիշերակաց	֏220,000
Նկարչական նյութեր	֏2,000,000
Իրազեկման բարձրացման նյութեր	֏300,000

Փոխարժեքը 2019-ի մայիսի 2-ի դրությամբ՝
1 ԱՄՆ դոլար = 475

ԸՆԴՀԱՆՈՒՐ **֏3,310,000**